| | |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ<br>ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ<br>ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ<br>ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | РЕСПУБЛИКА<br>АРМЕНИИ<br>АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ<br>ОБЩИНА ГАЙ |

« 07 » հունիսի 2012 թ.
թիվ 68

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Կից ներկայացվում է Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 5-ին կայացած թիվ 6 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 5 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 5340-12
«11» 06 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի հունիսի 5-ի թիվ 6 արտահերթ նիստի N 20

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

Ավագանին որոշեց՝

1. Հաստատել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ֆ. Ավդոյան ---------------- (ստորագրություն)
2. Գ. Արզումանյան ---------------- (ստորագրություն)
3. Հ. Դանիելյան ---------------- (ստորագրություն)
4. Ս. Հովհաննիսյան ---------------- (ստորագրություն)
5. Ա. Լևոնյան ---------------- (ստորագրություն)
6. Ա. Հակոբյան ---------------- (ստորագրություն)
7. Է. Պետրոսյան ---------------- (ստորագրություն)

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մարկոսյան

2012 թվականի հունիսի 7-ին
գյուղ Գայ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գայի գյուղական
համայնքի ավագանու 2012 թվականի
հունիսի 5-ի N 6 արտահերթ նիստի
N 20 որոշման

Օրակարգ

1. Օրակարգի հաստատում:

   (Զեկ. Ս. Մարկոսյան)

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 5-ի «Բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Մարկոսյան)

3. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 8.17 հա հողատարածքը մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին:

   ( Զեկ. Ս. Մարկոսյան)

4. Արմավիրի մարզի Գայ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման 800քմ (ԿԾ 0410-0009), և գյուղատնտեսական այլ հողատեսքի 6386 քմ (ԿԾ 224-007) հողատարածքների աճուրդ-վաճառք կազմակերպելու մասին:

   ( Զեկ. Ս. Մարկոսյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի հունիսի 5-ի թիվ 6 արտահերթ նիստի N 21-Ն

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի «ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ավագանին որոշեց՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 5-ի «Բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) 01/6/1-ի 5112 հոդվածից 1000.0 դրամ տեղափոխել 5113 հոդվածին:
2. Սույն որուշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ֆ. Ավդոյան ------------------- (ստորագրություն)
2. Գ. Արզումանյան ------------------- (ստորագրություն)
3. Դ. Դանիելյան ------------------- (ստորագրություն)
4. Ս. Հովհաննիսյան ------------------- (ստորագրություն)
5. Ա. Լևոնյան ------------------- (ստորագրություն)
6. Ա. Հակոբյան ------------------- (ստորագրություն)
7. Է. Պետրոսյան ------------------- (ստորագրություն)

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2012 թվականի հունիսի 7 -ին
գյուղ Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի հունիսի 5 -ի թիվ 6 արտահերթ նիստի N 22

# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 8.17 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին կետով, « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ավագանին որոշեց՝

1. Թույլատրել Գայի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատընտեսական նշանակության 8.17 հա հողատարածքը մրցույթային կարգով վարձակալության տրամադրելու:
   1) ԿԾ 04-033-0216-0003, 8.17 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքի համար տարեկան վարձավճար սահմանել 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ տարեկան վարձավճարի 5%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ֆ. Ավդոյան ---------------------- (ստորագրություն)
2. Գ. Արզումանյան ---------------------- (ստորագրություն)
3. Հ. Դանիելյան ---------------------- (ստորագրություն)
4. Ս. Հովհաննիսյան ---------------------- (ստորագրություն)
5. Ա. Լևոնյան ---------------------- (ստորագրություն)
6. Ա. Հակոբյան ---------------------- (ստորագրություն)
7. Է. Պետրոսյան ---------------------- (ստորագրություն)

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2012թվականի հունիսի 7 -ին

գյուղ Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի հունիսի 5-ի թիվ 6 արտահերթ նիստի N 23-Ն

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 800 ՔՄ (ԿԾ 0410-0009), ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ 6386 ՔՄ (ԿԾ 224-007) ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ավագանին որոշեց՝

1. Թույլատրել Գայի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման 800քմ (ԿԾ 0410-0009), և գյուղատնտեսական այլ հողատեսքի 6386 քմ ( ԿԾ224-007 ) հողատարածքները աճուրդ-վաճառք կազմակերպելու:
2. ԿԾ 0410-0009 բնակավայրերի հասարակական կառուցապատման 800 քմ հողամասի համար մեկնարկային գին սահմանել 765 600 (յոթ հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր ) ՀՀ դրամ, իսկ ԿԾ 224 - 007 գյուղատնտեսական այլ հողատեսքի 6386 քմ հողամասի համար մեկնարկային գին սահմանել 37 000 (երեսունյոթ հազար) ՀՀ դրամ: Յուրաքանչյուր քայլը՝ գնի 5% չափով:
3. Համայնքի ղեկավարին առաջարկել իրականացնելու սույն որոշումից բխող իրավական գործունեությունը:
4. Սույն որուշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ֆ. Ավդոյան ---------------- (ստորագրություն)
2. Գ. Արզումանյան ---------------- (ստորագրություն)
3. Հ. Դանիելյան ---------------- (ստորագրություն)
4. Ս. Հովհաննիսյան ---------------- (ստորագրություն)
5. Ա. Լևոնյան ---------------- (ստորագրություն)
6. Ա. Հակոբյան ---------------- (ստորագրություն)
7. Է. Պետրոսյան ---------------- (ստորագրություն)

Գայ համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2011թվականի նոյեմբերի 25 -ին
գյուղ Գայ